ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 դեկտեմբերի 2015 թվականի N 1490 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱ-
ԿԱՆԻ ՄԱՐՏԻ 19-Ի N 312-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի «Լիազոր մարմին ճանաչելու, հավաստագրման հանձնաժողով ստեղծելու, հանձնաժողովի կազմը, հավաստագրման հանձնաժողովի աշխատանքների կազմակերպման, տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի տնտեսավարող սուբյեկտների հավաստագրման կարգը, հավաստագրի ձևը, հավաստագրի գործողության ընթացքում ստացված արդյունքների մասին հաշվետվության ներկայացման կարգը և ձևը, տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում գործունեություն իրականացնող կազմակերպությունների շահերը ներկայացնող միավորումների և ոչ առևտրային կազմակերպությունների ներկայացուցիչներին հավաստագրման հանձնաժողովի կազմում ընդգրկելու կարգը և պայմանները հաստատելու մասին» N 312-Ն որոշման N 6 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2015 թ. դեկտեմբերի 17
Երևան

Հավելված
ՀՀ կառավարության 2015 թվականի
դեկտեմբերի 17-ի N 1490 - Ն որոշման

«Հավելված
ՀՀ կառավարության 2015 թվականի
մարտի 19-ի N 312 - Ն որոշման

Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀԱՎԱՍՏԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՍՏԱՑՎԱԾ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(20___թ. _____ կիսամյակի համար)

Իրավաբանական անձի անվանումը	Գործունեության տեսակը	Աշխատողների թիվը		Հասույթը (դրամ)	Արտահանման ծավալը (դրամ)	Ռեզիդենտ բաժնեմասի սեփականատեր (բաժնետեր, փայատեր)		Ոչ ռեզիդենտ բաժնեմասի սեփականատեր (բաժնետեր, փայատեր)	
		աշխատանքային պայմանագրերով	քաղաքացիական իրավական պայմանագրերով			անունը, ազգանունը կամ անվանումը (այդ թվում՝ ներդրումային ֆոնդերի)	մասնակցության չափը (տոկոս)	անունը, ազգանունը կամ անվանումը (այդ թվում՝ ներդրումային ֆոնդերի)	մասնակցության չափը (տոկոս)

Այլ տեղեկություններ՝

- փաստացի գործում է բացառապես հավաստագրով սահմանված գործունեության տեսակների ներքո.

Այո [ ] Ոչ [ ]

- աշխատողների թիվը չի գերազանցում 30-ը.

Այո [ ] Ոչ [ ]

- հավաստագրի գործողության ընթացքում չի օտարել հիմնական միջոցներ, ինչպես նաև չի կնքել համատեղ գործունեության պայմանագիր.

Այո [ ] Ոչ [ ]

- իր գործունեության արդյունքները չի օտարել ՏՏ ոլորտում գործունեություն իրականացնող՝ ՀՀ

ռեզիդենտ հանդիսացող այլ տնտեսավարող սուբյեկտներին՝ բացառությամբ կրթական ծրագրերի իրականացման դեպքերի. Այո [ ] Ոչ [ ]

Հավաստիացնում եմ, որ սույն հաշվետվության մեջ ներկայացված տեղեկատվությունն ամբողջական է և արժանահավատ: Գիտակցում եմ, որ կեղծ և (կամ) ոչ արժանահավատ տեղեկատվություն ներկայացնելը կհանգեցնի Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված պատասխանատվության:

_____

(կազմակերպության տնօրենի ստորագրությունը, անունը, հայրանունը, ազգանունը)

_____ _____ 20___ թ.»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ